

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

ԿԻՐԱԿԻ, 13 Օգոստոս 2017  
ՎԻՐԱՓՈԽՈՒՄՆ Ս.  
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ / ԹԻԻ 19

SUNDAY, August 13, 2017  
THE FEAST OF THE  
ASSUMPTION OF THE  
HOLY VIRGIN – N0/19



## TODAY'S BIBLE READINGS

Galatians 3:29-4:7 | Luke 2:1-7 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՉՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիվ

Celebrant:

**REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN**

*Pastor*

*Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,  
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan*

*Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian*

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

*Choirmaster: Miss Lori Antounian*  
*Organist: Mr. Karen Manucharyan*

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

### ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 3.29-4.7

**29** Իսկ եթե դուք Քրիստոսին եք, ուրեմն Աբրահամի զարմն եք, եւ ոստումին համաձայն՝ ժառանգորդներ: **1** Բայց այնքան ատեն որ ժառանգորդը մանուկ է, կ'ըսեմ թե ոչինչով կը տարբերի ստրուկէ մը, թեպէտ բոլորին տէրն է. **2** հապա ինամակալներու եւ հոգատարներու հեղինակութեան տակ է՝ մինչեւ հորը ճշդած պայմանաժամը: **3** Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: **4** Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած զրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, **5** որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրուե՞նք ստանանք: **6** Եւ քանի որ դուք որդիներ եք, Աստուած ձեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Յոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: **7** Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՝ որդի. ու եթե որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի միջոցով:

### ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2.1-7

**1** Այդ օրերը Օգոստոս կայսրէն հրամանագիր ելաւ, որ ամբողջ երկրագունդը արձանագրուի: **2** (Այս առաջին աշխարհագիրը եղաւ՝ երբ Կիւրենոս Սուրիայի վրայ կառավարիչ էր:) **3** Բոլորը կ'երթային արձանագրուելու, իւրաքանչիւրը՝ իր քաղաքին մէջ: **4** Յովսէփ ալ՝ Գալիլեայէն, Նազարէթ քաղաքէն, բարձրացաւ դէպի Հրեաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթլեհէմ կը կոչուի, (քանի ինք Դաւիթի տունէն եւ գերդաստանէն էր,) **5** արձանագրուելու Մարիամի հետ, որ իր նշանածն էր ու յղի էր: **6** Երբ անոնք հոն էին՝ անոր ծնանելու օրերը լրացան. **7** եւ իր անդրանիկ որդին ծնաւ, խանձարուրով փաթթեց զայն ու մսուրին մէջ պառկեցուց, որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար իրենց:

## Galatians 3.29-4.7

**29** And if ye be Christ's, then are ye Abraham's seed, and heirs according to the promise.  
**4** Now I say, That the heir, as long as he is a child, differeth nothing from a servant, though he be lord of all; **2** But is under tutors and governors until the time appointed of the father.  
**3** Even so we, when we were children, were in bondage under the elements of the world:  
**4** But when the fulness of the time was come, God sent forth his Son, made of a woman, made under the law, **5** To redeem them that were under the law, that we might receive the adoption of sons. **6** And because ye are sons, God hath sent forth the Spirit of his Son into your hearts, crying, Abba, Father. **7** Wherefore thou art no more a servant, but a son; and if a son, then an heir of God through Christ.

## Luke 2.1-7

**2** And it came to pass in those days, that there went out a decree from Caesar Augustus that all the world should be taxed. **2** (And this taxing was first made when Cyrenius was governor of Syria.) **3** And all went to be taxed, every one into his own city. **4** And Joseph also went up from Galilee, out of the city of Nazareth, into Judaea, unto the city of David, which is called Bethlehem; (because he was of the house and lineage of David:) **5** To be taxed with Mary his espoused wife, being great with child. **6** And so it was, that, while they were there, the days were accomplished that she should be delivered. **7** And she brought forth her firstborn son, and wrapped him in swaddling clothes, and laid him in a manger; because there was no room for them in the inn.



# ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

<<Օրհնեալ ես դու ի կանայս>>  
Ղուկ. Ա 42

Խաղողօրհնէքի արարողութիւնը սերտօրէն կապուած է Տիրամօր Վերափոխման տօնին հետ, ապա անիկա մասնաւոր կապ մը չունի եկեղեցական վարդապետութեան հետ, այլ աւանդութիւն մըն է, որ կու գայ հեթանոս մեր պապերէն, որոնք, երբ բերքը կը հասներ, հասունցած առաջին բաժինը կը նուիրէին չաստուածներուն: Գրիգոր Լուսաւորիչ հեթանոսական շատ տօներ որդեգրած է մեր եկեղեցւոյ ծիսակատարութեան մէջ՝ տալով անոնց քրիստոնէական երանգ:

Հայ քրիստոնէական եկեղեցին մեծ կարեւորութեամբ կը տօնախմբէ Աստուածածնի Վերափոխման յիշատակը: Ըստ աւանդութեան, Ս. Կոյսը վախճանած է Երուսաղէմի մէջ, Քրիստոսի համբարձումէն 15 տարիներ ետք: Աշակերտները զայն թաղած են Գեթսեմանիի ձորին մէջ: Թաղման արարողութեան ներկայ չէր եղած միայն Բարթողիմէոս առաքեալը, որ փութացած էր Երուսաղէմ՝ յարգանքի իր վերջին պարտականութիւնը կատարելու: Մեծ կ'ըլլայ առաքեալներուն զարմանքը, երբ թափուր կը գտնեն Աստուածածնի գերեզմանը: Աստուածորդին երկիր իջնելով երկինք փոխադրած էր իր մօր մարմինը: Գեղեցիկ է Վերափոխման աւանդութիւնը: Ան ցոյց կու տայ Աստուածածնի կատարեալ Էակ մը ըլլալը, ինչպէս նաեւ՝ մայրութեան առաքինութեան լինելութիւնը:

<<Օրհնեալ ես դու ի կանայս>>. Հրեշտակը այս բառերով աւետած էր Մարիամի, թէ Աստուած հաճած էր որ իր Միածին Որդին մարմին առնէր Մարիամու արգանդին մէջ, աշխարհի վրայ իրագործելու համար գերբնական պարտականութիւնը: Որով, այս օրը տօնն է բոլոր կին արարածներուն, որոնք որդեգրած են ու կապրին աստուածահաճոյ կեանք մը: Քրիստոնէութիւնը եղաւ տիեզերական այն կրօնը, որ կինը համահաւասար դասեց մարդուն հետ: Քրիստոնէական աշխարհին մէջ իգական սեռը արժէք



ստացաւ եւ գրաւեց իրեն արժանի տեղը ընկերութեան մէջ: Մարիամ Աստուածածնի անձը դարձակետ մը եղաւ քաղաքակրթութեան յառաջդիմութեան:

Հայ ժողովուրդը իր կազմակերպման շրջանին իսկ գիտցաւ յարգել կին էակին իրաւունքները: Այս իմաստով, Հայերը իրենց Անահիտ դիցուհիին մէջ մարմնաւորած են կնոջ մը առաքինութիւնները ու զայն պաշտած որպէս << Մայր ամենայն զգաստութեանց>>: Մեր նախահայրերը միշտ յարգած են կինը, որովհետեւ զայն նկատած են որպէս սիւնը ընտանիքին:

Քրիստոնէական եկեղեցին սկիզբէն յարգած է ու պատուած է Ս. Կոյսը. փաստ՝ եկեղեցիներու աւագ խորանները, որոնք Ս. Կոյսին նկարով զարդարուած են: Աստուածածինը գրաւած է հեթանոս դիցուհիներու տեղերը եւ իր վրայ հրաւիրած մարդոց պաշտամունքը: Նարեկացին հետեւեալ բառերով ներբողած է Աստուածածինը:


<<Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովբէ երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշախաղ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գերազանցեալ զբնակութիւն անկոխելին, սրբութեանց երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ շնչական>> (Բան Զ):

Աստուածածնի անձը որ համակ մեծութիւն է, թող օրինակ ծառայէ նոր սերունդի իգական սեռին: Այժմու կեանքի պարգեւած ազատութիւնը երբեք առիթ թող չըլլայ կին արարածը պարպելու իր կնոջականութենէն:

Մայրութեան իտեալը, որ զուգորդուած է Աստուածամօր անձին հետ, առաջնորդ թող ըլլայ Հայ մայրերուն:

Սուրբ Նարեկացիին հետ մենք եւս մեր ձայները բարձրացնենք առ Ս. Կոյսին եւ իրմէ խնդրենք <<կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ կենաց ինձ զօրէ>>:

## Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան



# Feast of the Assumption of the Holy Mother-of-God- Grape Blessing


The Assumption is the day that God assumed the Virgin Mary into Heaven following her death. It is the oldest and principal feast day of all those dedicated to St. Mary.

On the day of the Feast of the Assumption, the blessing of grapes takes place immediately after the Divine Liturgy. After the Divine Liturgy, the blessing of the grapes will be conducted. Upon the conclusion of the service, the blessed grapes were distributed to the faithful.

The custom of blessing grapes, the first fruits of the harvest, can be traced back to Old Testament times, when farming was a common vocation. Of the vast variety of produce, grapes had a special place of honor and were considered the "first fruits" because they were the first produce of harvest.

We thank all the families and individuals that donated the grapes.





## Days of the Dead - Merelots

It is a solemn tradition that on the day following the 5 major feast days of the Armenian Church, a day is observed in memory of those who have passed away, and are asleep in Jesus Christ. On this day, the faithful the gravesides of their dearly departed, and the priest will offer requiem prayers for their souls. According to tradition, a special Divine Liturgy is also held on these days, when the faithful can remember the names of all of the faithful for whom we pray for eternal life. These Divine Liturgies are not typically celebrated in the Diaspora, because of peoples work schedules, but the faithful are invited to offer the names of the faithful to be prayed for during the Divine Liturgy celebrated the following Sunday.

If you would like to observe this tradition on the day following a major feast day, which includes Christmas, Easter, Feast of the Transfiguration, Assumption of the Holy Virgin Mary, and the Exaltation of the Holy Cross, please contact the Church Office.



# ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի, 14 Օգոստոս  
2017

Հոգեհանգիստ առաւօտեան  
ժամը 10:30-ին:

Գերեզմանի այց – փափաքող

հաւատացեալներէն կը խնդրուի հեռաձայնել **Տ. Եղիա Ա. Քհնյ. քերականճեանին** (514) 241-9347 կամ **Եկեղեցւոյ գրասենեակ** (514) 279-3066



## MEMORIAL DAY FOR DEADS (MERELOTZ)

Monday, August 14, 2017

Memorial service at 10:30 am

For cemetery visit please contact with Der

Yeghia at (514) 241-9347 or Church office at (514) 279-3066.



## SUNDAY SERVICES (BADARAK)

Join us every Sunday morning to celebrate the Divine Liturgy. The Divine liturgy is the main worship service of the Armenian Church. But the Badarak is much more than that. It provides the most intimate encounter we can have with God in this life. In the Divine Liturgy, Jesus Christ, the Son of God, comes to his people - to you and me - in two forms: First, by his Word, in the reading of the holy Gospel; and





second, by his holy Body and Blood, in Holy Communion. These two actions -- the reading of the Word of God, and the reception of Holy Communion -- are the two pillars or building blocks of the Divine Liturgy in all ancient, apostolic churches.



## Խաղողօրհնէք

Վերափոխման տօնին՝ յաւարտ  
Ս. Պատարագի, բոլոր  
Եկեղեցիներուն մէջ կը  
կատարուի

խաղողօրհնութեան կարգ:  
Բոլոր պտուղներէն աւելի  
կ'օրհնուի խաղողի ողկոյզը,  
քանի որ Տէրը խաղողի որթը  
ամենագորաւոր ծառերէն



աւելի վեր բարձրացուց եւ պատուեց առաւել, քան միւս տունկերը՝ Իրեն  
խաղողի որթ անուանելով՝ ըստ այն խօսքին, թէ. «Ես եմ ճշմարիտ  
որթատունկը» (Յովհ. 15:1):

Իսկ Տիրոջը սիրով կապուածներուն ճիւղեր անուանեց եւ Հօրը՝ Մշակ,  
որպէսզի Հայրը, նետելով որթատունկը՝ պտղաբեր դարձնէ արդարութեան  
գործին մէջ, իսկ նետուած ճիւղերը յաւիտենական կրակի նիւթ դարձնէ:  
Միաձին Որդին Վերնատունին խորհրդաւոր ընթրիքի ժամանակ գինին՝  
խաղողի արիւնը, Իր փրկական Արեան նիւթը դարձուց եւ Իր ձեռքերուն մէջ  
վերցնելով՝ օրհնեց՝ ըսելով. «Այս է Նոր ուխտի Իմ Արիւնս» (Մատթ. 26:28):  
Անով մենք գնուեցանք ու ազատուեցանք մեղքերու ծառայութենէն ու մահէն:



Աստուածածնի տօնին առիթով տեղի ունեցող խորովածի եւ  
խաղող ողկոյզներու ծրարման աշխատանքները, սիրայօժար  
կերպով ստանձնեցին՝ Պոլսահայ Մշակութային Միութեան  
Եկեղեցասէր անդամները:

Այս տօնին առիթով մեր յատուկ շնորհակալութիւնը կը յայտնենք  
իրենց կազմակերպչական աշխատանքներուն համար եւ կը մաղթենք  
յարատեւ յաջողութիւն իրենց բոլոր նախաձեռնութիւններուն մէջ:

Հովիւ եւ Ծխական Հովիւ



# ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՕՆԻՆ

Սիրելի հաւատացեալներ,

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին առիթով տօնին առիթով կը շնորհաւորենք բոլոր

**Մարիամ, Մարօ, Մարիանուշ, Տիրուհի, Իսկուհի, Մաքրուհի, Սուրբուհի, Թագուհի, Լուսիկ, Լուսածին, Լուսաբեր, Լուսմայր, Արփենիկ, Երանյակ, Երանուհի, Արեգ, Արեւիկ, Լուսնթագ, Աղաւնի, Մարգարիտ, Նազիկ, Նազելի, Տենչելի, Դշիտ, Բերկրուհի, Ազնիւ, Անթարամ, Արուսեակ, Կուսինէ, Վերգինէ, վերժին, Արշալոյս, Գեղանուշ, Գեղանիկ եւ Երջանիկ**

անունները կրողներուն անուանակոչութիւնը:

Այս ուրախ եւ հոգեպարար առիթով,

Եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւ՝ Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան յետ Ս. Պատարագի պիտի օրհնէ բոլոր անոնց որոնց անուանակոչութիւնը կը զուգադիպի այս օրուան, որպէսզի Տէրը առաւել եւս արժանի դարձնէ Աստուածածնի տօնին առիթով Իր Աստուածային շնորհքին եւ սիրոյ մէջ պահպահնելու բոլոր հաւատացեալները:

## NAME DAY REMEMBRANCE ON THE FEAST OF THE ASSUMPTION OF VIRGIN MARY

Dear Parishioners,

On the feast of the Assumption of the Virgin Mary we congratulate all the individuals who are named

**Mariam, Maro, Maryanoush, Dirouhi, Isgouhi, Makrouhi, Serpouhi, Takouhi, Lousig, Lousatzin, Lousaper, Lousmayr, Arpenig, Yeranag, Yeranouhi, Arek, Arevig, Lousentak, Aghavni, Markarid, Nazig, Nazeli, Dencheli, Teshkho, Pergrouhi, Azniv, Antaram, Arousiag, Gousine, Verkine, Vergine, Arshalouys, Keghanoush, Keghanig & Yerchanig.**

On this delightful occasion,

After the Divine Liturgy, Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan, Pastor, will bless all the above-mentioned name carriers and pray to the Lord to preserve them in the Divine grace and love.



**Սիրելի հաւատացեալներ,  
Անոնք որոնք կը փափաքին, որ  
Հոգևոր հովիւը այցելութիւն  
կատարէ իրենց հիւանդ  
ընտանեկան պարագաներուն կամ  
հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւր՝  
Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան պատրաստէ  
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու  
ձեր փափաքին:  
Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ  
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ  
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066**



**FAMILY PRAYER**

*God made us a family  
We need one another  
We love one another  
We forgive one another  
We work together  
We play together  
We worship together  
Together we use God's word  
Together we grow in Christ  
Together we love all men  
Together we serve our God  
Together we hope for Heaven  
These are our hopes and ideals  
Help us to attain them,  
O God, Through Jesus Christ  
our Lord*

800-036

Dear  
Parishioners,  
Those who  
want the  
Pastor's visit to  
their sick family members or relatives, Rev.  
Arch. Fr. Yeghia Kervanjian, Pastor is ready  
with his visit to accomplish your  
expectations as soon as possible.  
Be pleased to keep in touch with  
Der Yeghia at (514) 241-9347 or contact the  
Church office at (514) 279-3066



# ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԻԱՆԴԹՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Ինչպես կը վկայ է Ս. Գրիգոր Տաթևացին տնօրինեքը իբրև արարողութիւն հիմնադրուած է Յարուցեալ Փրկիչին կողմէ. «... Յարութենէն յետոյ Քրիստոս վերնատուն մտաւ եւ օրինեց աշակերտներուն, որուն համար նոյն Խաչն ու Աւետարանը / կը



խորհրդանշեն Յիսուս Քրիստոսին/ տանելով տուն՝ կ'օրինենք մեր բնակարանները»:

Մեր Տիրոջ Յիսուսի Համբարձումէն յետոյ Յիսուսի տասներկու առաքեալները, հետեւելով Տիրոջ օրինակին, Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Յարութեան բարի լուրը աւետելու եւ օրինելու համար կ'այցելէին հաւատացեալներու տուները: Ուստի եւ այս աւանդութիւնը հետագային շարունակեցին առաքեալներու հետեւորդները՝ ձեռնադրուած եւ օծուած քահանաները: Համաձայն վերոյիշյալ աւանդութեան՝ հայ եկեղեցականը Յիսուսի Ծննդեան ու Չատիկի տօներուն առիթներով կ'այցելէ հաւատացեալներու տուները՝ պատշաճ արարողութեամբ կ'օրինէ անոնց եւ բնակարանները եւ կու տայ օրուան աւետիսը:

Տնօրինեքի ժամանակ քահանայի կողմէն կ'օրինուի հիմնականին տունը, տան հացը, ջուրը եւ աղը: Արարողութեան վերջաւորութեան, որպէս օրինութեան եւ առատութեան մայրուն նշան, քահանան տան անդամներուն նշխար կու տայ, որ պետք է սրբութեամբ պահուի ալիւրի մէջ կամ ուրիշ վայելուչ տեղ՝ ի նշան տան ունեցուածքի առատութեան, բերրիութեան ու յաջողութեան:

Տնօրինեք կը կատարուի նաեւ, երբ նոր բնակարանամուտ տեղի կ'ունենայ կամ անյաջողութիւններու պատճառով կը խախտուի տան խաղաղութիւնը ու երբ տունին մէջ կը զգացուի չար ուժերու ներգործութիւն:

Քանի որ այս արարողութիւնը կարելոր է մեր ընտանեկան համերաշխութեան, ամրութեան ու խաղաղութեան համար, ուստի անհրաժեշտ է եւ պատշաճ, որ բանիմաց քրիստոնեան ինքը երթայ եկեղեցի եւ քահանային հրաւիրէ տնօրինեքի:

**Տնօրինեք փափաքող հաւատացեալները կրնան հեռաձայնել Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեանին՝ (514) 241-9347 կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066**

# The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt.

It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.



To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.

ԽԱՂՈՂՈՐՅՆԷՔ  
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ  
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ  
ԱՌԻԹՈՎ



Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին  
Խաղող նուիրել կամ նուիրատուութիւն  
կատարել Աստուածածնի Խաղողօրհնէքի առիթով կրնան հեռաձայնել  
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 կամ անձամբ ներկայանալ Եկեղեցի:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝  
Յովիւ եւ Ծիսական Խորհուրդ



## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

### Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Հովիւն ու Ծխական Խորհուրդը

### ԼՕԿԱՆ ԳՈՒՐՃԱՔԵԱՆԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով  
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն  
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,

որ փոքրիկն **ԼՕԿԱՆԸ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ  
Աստուածային Օրհնութեան  
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



## **CONGRATUALTIONS ON THE BAPTISMAL CEREMONY**

The Pastor & the Parish Council  
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral  
On the Baptismal ceremony  
of the child

### **LOGAN KOURJAKIAN**

Extend their heartfelt congratulations  
to the child parents & family.





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,  
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,  
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ  
քարտուղարութեան (514) 279-3066, մեր  
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար  
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:  
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

***Հովիւ եւ Եկեղեցւոյ Խորհուրդ***



**Attention to our beloved parishioners,  
If you have changes in your address, e-mail or phone numbers  
please feel free to convey your new data to the Church office at  
(514) 279-3066, to maintain our communication in a regular,  
continuous, and up-to-date course.  
Thank you for your cooperation.**

***Pastor and Parish Council***



## **Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ**

**Վերափոխումն Ս. Աստուածածնի –**

**Խաղողօրհներ – Կիրակի, 13 Օգոստոս 2017**

**Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017**

**Տարեկան Պագար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017**

**Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017**

**Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –  
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017**

## **FEAST DAYS AND UPCOMING EVENTS**

**Feast of the Assumption of the Holy Mother of God -  
Sunday, August 13th, 2017**

**Feast of the Exaltation of the Holy Cross –  
Sunday, Sept. 17th, 2017**

**Annual Bazaar – Saturday & Sunday-  
October 28 & 29, 2017**

**Children’s Christmas /CFFA –  
Sunday, December 3<sup>rd</sup>, 2017**

**Church 47<sup>th</sup> Anniversary –  
Sunday, December 10<sup>th</sup>, 2017**



# ՆՈՒԻՐԱՏՈՒՆԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON  
À L'ÉGLISE



DONATION  
FOR THE CHURCH

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of July/August 2017  
have been received with great appreciation***

## **TO THE CHURCH:**

*Mr. & Mrs. Minas & Verjine Asaduryan \$200, Alice & Sonia Soghomonian \$100,  
Mr. Manvel Markosyan \$40, Mr. Hovsep Doramajian \$25.*

## **GRAPE BLESSING:**

*Mr. & Mr. Krikor & Rose Dikranian, Mr. Jirayr Gazeryan \$30, Mr. Toros Kilavuz,  
Mrs. Alis Shoushan Arisyan, Mrs. Anoush Keoprulian \$20.*

*Mrs. Lousentak Esmezyan, Mr. & Mrs. Noubar & Nazeni Trurac, Mr. &  
Mrs. Hrair & Ani Kurkcuoglu.*

## **HOKEHANKISD:**

### **THE LATE BERDJ MOURADIAN**

*Mrs. Astri Mouradian \$500, Mr. Arto Mouradian \$200, Mr. Serge Tcholakian, Mr. & Mrs. Arden  
Dervishian, Mr. Sarkis Sarkissian \$100, Mr. Francois Racha, Mr. & Mrs. Berj & Siran Alexanian,  
Mrs. Nathalie Racha, Mr. & Mrs. Artin Majakian, Mrs. Seta Boyadjian, Mrs. Suzanne  
Oghigian, Mr. Diran Boyadjian, Mrs. Diana Naguib \$50, Dr. Haig Baltadjian \$40, Mrs. Anahid  
Tchakedjian, Alahaydoyan Family, Mr. & Mrs. Eddie & Lucy Best & Family \$30.*

### **THE LATE M. SEVOYAN**

*Mr. Souren Gyumishyan \$80.*

### **THE LATE MINASSIAN & DAKESSIAN FAMILIES**

*Mr. Vasken Dakessian \$100.*

### **THE LATE KHATCHATRIAN FAMILY**

*Mr. & Mrs. Henry Farmer & Naira Khatchatrian \$100.*

**THE LATE CICEK FAMILY**

*Mr. & Mrs. Mihran Cicek, Mr. & Mrs. Rudi & Lidya Koser \$100.*

**THE LATE SONIA KALANIAN**

*Dr. Nairi Kalanian \$250.*

**THE LATE LUCIE MESROBIAN**

*Mr. Shahen Mesrobian \$40.*

***IN LIEU OF FLOWERS, THE FOLLOWING  
DONATIONS WERE RECEIVED FOR:***

**THE LATE SIRANOUCHE MAGHAKIAN AROYAN**

*Mr. Arto & Alice Markarian \$200, Miss Shoushan Aroyan & Mr. Ara Aroyan & Family, Mr. Norair Markarian, Mr. & Mrs. Arek Markarian & Family, Mr. & Mrs. Varouj Gurunian & Family \$100, Mr. & Mrs. Nerses & Rachel Doramajian, Mrs. Maro Badiguian, Mrs. Nairy Mechedjian, Mrs. Mary Doramajian, Mrs. Anahid Chidemian Abadjian \$50, Mr. & Mrs. Levon Puzantian, Mr. Zareh Osganian \$30, Mrs. Maria Seraydarian, Ms Araxie Dekmezian, Mrs. Celine Metz \$25.*





# SOL



**ՎԵՐԱՓՈԽՈՒՄ Ա. ԱՍՏՈՒԾԱԾՆԻ  
ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ**

**FEAST OF ASSUMPTION OF THE HOLY VIRGIN MARY  
& GRAPE BLESSING**

**ՈՒՆՏԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ  
DIVINE LITURGY**

Կիրակի, 13 Օգոստոս 2017, ժամը 10:30-ին / Sunday,  
August 13, 2017 at 10:30 am

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔԶՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ**

Հոգևոր Հովի

**Celebrant:**

**REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN**

*Pastor*

*Ա. Սեդանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկալազները:*

*Պատարագի երգեցողությունը պիտի կատարե*

*«Կոմիտաս» Դպրաց Դասը:*

*Ղեկավար՝ Լորի Անթունյան / Choirmaster: Lori Antounian*

*Երգեհոնահար՝ Կարեն Մանուչարյան / Organist: Karen*

*Manucharyan*

*Յաւարտ Ա. Պատարագի Ծխական Խորհուրդի  
նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ խորովածի  
սպասարկութիւն եւ Տիկնանց Յանձնախումբի  
կազմակերպութեամբ «Անուշեղէնի Վաճառք»  
Եկեղեցւոյ շրջափակին մէջ:*

- *After the Divine Liturgy BBQ will be held in the church front garden, organized by Parish Council &*


- *Bake Sale by Ladies Auxiliary.*

*Մուտքի Նուէր՝ \$20 / Entrance Fee \$20*



**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐՊԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՑԻ  
ST-GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN  
CATHEDRAL**

**ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ  
ԴԷՊԻ ST- ANNE -DE -BEAUPRE  
ՏԱՃԱՐ  
PILGRIMAGE  
TO ST-ANNE-DE-BEAUPRE  
SHRINE**



**Կազմակերպութեամբ՝ / Organized by:**

**ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻՆ / LADIES AUXILIARY**

**Չորեքշաբթի, 30 Օգոստոս 2017 / Wednesday,  
August 30, 2017**



- Մասնակցութեան Մակ - \$50
- Participation Fee - \$50
- Ճամբորդական  
Հանրակառք / Չովացուած  
օդի դրութեամբ

• Voyage Bus /Air -

Conditioned



**Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռաձայնել  
Եկեղեցի (514) 279-3066 / For more information call us at the  
Church office at (514) 279-3066**



**ԴՊՐԱՅ**

**ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ**

**Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Եկեղեցւոյ**

**Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը**

**Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան  
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,  
որոնք կը փափաքին ծառայել  
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել  
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը  
խնդրենք**

**հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347**

**Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:**

**Հոգեւոր Հովիւ**

**Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան**

**ՄԱՅՐ ՏԱԾԱՐ**

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008**

**Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347**

**E-Mail: [secretary@saintgregory.ca](mailto:secretary@saintgregory.ca), [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

**Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



## ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի  
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,  
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն  
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ  
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն  
ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ  
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող  
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Եղիա Ա Քինյ. Քերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347

## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միբելի Հասարակական, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

### CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.